զարին) Ա՛ռ, (շեշտ նայում է Նազարի աչքերին) ա՛ռ, (աւելի մօտենում է) ա՛ռ…

ՆԱԶԱՐ.– Ի՞նչ անեմ… (ետ-ետ է քաշւում),

ՏԻՐԱՑՈՒ.–

Ա՛ռ այս դրօշն աստուածազայր,
Ձա՛րկ թշնամեաց բիւր ու հազար:

ՆԱԶԱՐ.– Հա՛… դէ հիմի ալարս գալիս է: Դիր էն պուճա՛խը, վաղը վեր կենամ ջարդեմ աշխարհքը:

ՏԻՐԱՑՈՒ.– (Դրօշակը դնում է անկիւնը) Ահա դնեմ յանկեանն խորանին, եւ կատարի բանն մարգարէին, թէ (երգելով) «Ծառա իմաստուն տիրեսցէ տէրանց անմտա՛ա՛ց»: (Հանում է ծոցից մի համայիլ) Ահաւասիկ համայիլ մի: (Վերցնում է գետնից մի-երկու փոշի) Ահաւասիկ փոշին հսկաների: (Փաթաթում է փոշին համայիլի մէջ եւ մեկնում Նազարին) Ա՛ռ:

ՆԱԶԱՐ.– Ի՞նչ է, ի՞նչ անեմ,

ՏԻՐԱՑՈՒ.– Դիր համայիլն այդ ի ծոցիդ եւ յաղթիր թշնամեաց: (Նազարն առնում է: Տիրացուն հանկարծ կանգ է առնում եւ տեղնուտեղը տրտինգ տալով՝ խնդմնդում է) Բռնեմ թալեմ, թալեմ բռնեմ (Դուրս է ընկնում:)

ՆԱԶԱՐ.– Տիրացո՛ւ, տիրացո՛ւ, մօ՛տս կաց, մարդու վնաս չտամ: (Ուզում է վեր կենալ եւ նրա հետեւից գնալ, բայց ծուլանամ է) Ի՛հ՛հ՛… (Ականջ է դնում: Վախ զգալով իրան սիրտ է տալիս) Մթնում է հա՛, մթնում է, քե՛զ տեսնեմ, Քաջ Նազար: (Հանկարծ վախեցած վազում է խրճիթ) Էս շան կնիկն ինչ եղաւ: Ո՛ւստիան: (Աւելի հեռուից) Ո՛ւստիան… (Կրկին ներս է վազում եւ դուռը խփելով կողպում է: Իսկոյն դուռը ծեծում են:) Ո՛վ է: (Ականջ է դնում:) Հաջի-Մուրա՞դ: (Լռութիւն:) Գոմեշ-Պատռա՞ն, դո՞ւ ես:

ՈՒՍՏԻԱՆ.– Հը՞, սատանաները կերա՞ն.:

ՆԱԶԱՐ.– (Խրճիթից դուրս գալով:) Բերանդ շաղ մի՛ տա: Դու չես իմանում ինչ ժամանակ է: Ինչի՞ ուշացար: Ո՞ւր էիր:

ՈՒՍՏԻԱՆ.– Քե՞զ էի հարցնում,

ՆԱԶԱՐ.– էդ իսկի իգիթի կնկա պատասխան չէր:

ՈՒՍՏԻԱՆ.– Էնդուր էլ սրտաճաք ներս ընկար, կասես հետեւդ աւազակ էր ընկել: